ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1176 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումը՝

1. «Սփյուռքի գլոբալ գագաթնաժողով 2026 (Global Diaspora Summit 2026)» խորագրով միջոցառմանը մասնակցելու, ինչպես նաև հայկական համայնքի ներկայացուցիչների, կրթության, մշակույթի և գործարար ոլորտներում գործունեություն ծավալող հայազգի գործիչների հետ հանդիպումներ ունենալու, առկա համագործակցային կապերն ամրապնդելու և հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները քննարկելու նպատակով՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Ձոն Սինանյանին (Փարիզից), Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) սփյուռքի ներուժի քարտեզագրման և հաշվառման վարչության պետ Կարեն Ավանեսյանին և գրասենյակի հայրենադարձների ինտեգրման վարչության պետ Հովհաննես Ալեքսանյանին 2026 թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ գործուղել Վրաստան (Թբիլիսի):

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ գործուղման ճանապարհածախսի, օրապահիկի և գիշերավարձի (դեկտեմբերի 3-4-ն ընկած ժամանակահատվածի համար) հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հայաստան-Սփյուռք գործակցության» ծրագրի «Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ պատվիրակության անդամների՝ 2026 թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածի գիշերավարձի հետ կապված ծախսերը և Կարեն Ավանեսյանի և Հովհաննես Ալեքսանյանի ճանապարհածախսը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ